

ԱՆՆ ԿՐԱԿԱՆԵՑ ՄԱԿԻ
ԿԱՐԳ ՄԸ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐՈՒ
ՀԵՌԱՆԱԼ ԻՐԱՔԷՆ

ՄԱԿԻ ընդհանուր քարտուղար
Քոֆի Անան էրեկ հրահանգեց
ՄԱԿԻ կարգ մը պաշտօնատար-
ներու՝ հեռանալ Իրաքէն, ՄԱԿԻ
նկատմամբ հետզհետէ սաստկա-
ցող կեցուածքներուն եւ ընդհան-
րապէս ապահովական անկայուն
իրավիճակին լոյսին տակ:

ԱԶՏԱԿ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE آزتاک جريدة يومية سياسية وأدبية - إيشادرويشيان

1500 Լ.Ա. 76Գ-ՏԱԲԷ, ԹԻԻ 168 (21510) ՈՒՐԲԱԾ, 26 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ԻՍՐԱՅԷԼ ԿԵՐՍՏԻՆ
ՊԱՇՏՈՆԵՑ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԸ

Իսրայէլեան բանակը երէկ
գիշեր վերստին պաշարեց պա-
ղեստինեան շրջանները, առա-
ջին հերթին փակելով մայրուղի-
ները: Իսրայէլացիք կը վախճան,
որ իրենց Նոր Տարուան առի-
թով պաղեստինեան յարձա-
կումները բազմապատկուին:

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԳԻ ԸՆԹԱՅԻՆ ՆԻՍԵ ԳՈՒՄԱՐՈՒԵՑԱԻ ԽԱՂԱՂ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՄԷՁ



Կառավարութիւնը երէկ Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց
իր ընթացիկ ժողովը, նախագահութեամբ նախագահ Գոր. Էմիլ Լահուտի եւ ներկա-
յութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

Ժողովէն բացակայեցան նախարարներ Սլէյման Ֆրենտիէ, Թալալ Արսլան, Ժան
Օպէյտ, Ալի Ապտալլա եւ Ապտալլա Ֆարհաթ:

Կառավարութիւնը քննարկեց հրատապ հարցեր եւ տուաւ համապատասխան որո-
շումներ, գործ ժողովին աւարտին յայտարարեց մշակութիւն նախարար Ղազի Արիտի,
տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահայի անհանգստութեան պատճառով
ժողովէն կանուխ մեկնումէն ետք:

Արիտի ըսաւ, որ կառավարութիւնը որոշած է աղբանոցներու հարցով ստորա-
գրած իր համաձայնագիրը գործադրել, այլ խօսքով՝ «Մուքիմ»ի հետ իր աշխատանքի
համաձայնագիրը խզել եւ սկսիլ նուազուրդի պայմանները ճշդող թղթածրարի պատ-
րաստութեան:

Ժողովին ընթացքին վերաշինութեան եւ Բարգաւաճման խորհուրդին հետ հեռա-
ձայնային հարցազրույցներ կատարուեցան, որուն հիմամբ որոշուեցաւ մէ-
կուկէս ամսուան ընթացքին ամբողջացնել նուազուրդի պայմաններու տետրակը,
միջազգային նուազուրդ յայտարարել յառաջիկայ 15 Նոյեմբերին: Այն հաստատու-
Շար.՝ Էջ 2

ԵՆՈՐԵՍՅՈՒՆ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԵՑԱԻ ԻՐԱՔԻ ՏԱՐԱԾԵՐԻՆ

ԻՐԱՔԻ ԻՇԽՈՂ ԽՈՐՀՈՒՐԳԻ ԱՆԿԱՍ ԱՔԻԼԱ ՇԱԶԻՍԻ, ՈՐ ՄԱՇՏՈՐՁԻ ԵՆԹԱՐԿՈՒԾ ԷՐ, ՄԱՇՏԱԻ

Իրաքի իշխող խորհուրդի անդամ Աքիլա Շաշիմի, որ
մահափորձի մը թիրախ դարձած էր անցեալ շաբաթ-
վերջին եւ ծանրորէն վիրաւորուած, մահացաւ երէկ:
Շաշիմի ենթարկուած էր քանի մը վիրաբուժութեան,
սակայն Չորեքշաբթի օր յայտարարուած էր, թէ անոր
վիճակը վատթարացած է եւ դարձած մտահոգիչ:

Իրաքի մէջ ամերիկեան քաղաքային իշխանութեան
ղեկավար Փոլ Պրեմըր գուժեց Շաշիմին, դիտել տալով,
որ Իրաքի ժողովուրդը կորսնցուց ազատութեան եւ
ժողովրդավարութեան խիզախ պաշտպան մը Շաշիմի
մահով: Պրեմըր աւելցուց, որ Շաշիմի կը ներշնչէր շա-
տերը իր գաղափարներով եւ համոզումներով: Ամերի-
կացի պաշտօնատարը խոստացաւ, որ ազատ, խաղաղ ու
ժողովրդավար Իրաք մը ունենալու Շաշիմի տեսլակա-
նը պիտի իրագործուի:

Իշխող խորհուրդի բանբերը եռօրեայ պաշտօնակա-
նուց յայտարարեց Իրաքի տարածքին՝ յարգելու հա-
մար յիշատակը Շաշիմի, որ իշխող խորհուրդին ան-
դամ երեք կինեբէն մէկն էր:

Շաշիմի յուղարկուածութիւնը տեղի պիտի ունե-
նայ այսօր, Նաժաֆի մէջ:

Արաբական Լիկայի բանբեր Հիշամ Եուսէֆ դատա-
պարտեց արաբը, որուն պատճառով մահացաւ Շաշի-
մի: Եուսէֆ ըսաւ, որ Իրաքը անկախուէր դարձնող ահա-
բեկչութեան քաղաքականութիւնը անընդունելի կը
նկատուի ու կը մեթոտուի:

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր ըսաւ, որ ցնցուած
ու տխրած է Շաշիմի մահով: Ան աւելցուց, որ Շաշի-
մին սպանողներուն եւ անոնց գորակից կանգնողնե-
րուն նպատակն է սկսնահարել իշխող խորհուրդը եւ
հարուածել Իրաքը վերականգնելու ճիգերը:

Ֆրանսա իր կարգին ցաւ յայտնեց Շաշիմի մահ-
անցով: Արտաքին գործոց նախարարութեան մէկ
բանբերը ըսաւ, որ Շաշիմի գործուր, գրաւիչ եւ խիզախ
անձնաւորութիւն մըն էր, որ փայլուն տեսլական մը
ունէր Իրաքի ապագային մասին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆԻՍՏԵՐՈՒ ՕՐԱԿԱՐԳԵՐՈՒՆ ՄԷՁ ՆԿԱՏԻ ԱՌՆՈՒԾ Է Յ. Յ. Դ.Ի ՆԱԽԱԶԵՆՆԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հայաստանի Ազգային ժողովի աշնանային նիստե-
րու օրակարգին մէջ նկատի առնուած է «Ահաբեկչու-
թեան դէմ պայքարի մասին» օրէնքի նախագիծը, գոր
նախաձեռնած է Հ. Յ. Դ. խմբակցութիւնը: Խմբակցու-
թեան քարտուղար ընկ. Հրայր Կարապետեան երէկ
յայտնեց, թէ նախագիծը յատկապէս կու տայ ահաբեկ-
չութեան դէմ պայքարի մասին սահմանումներ եւ ահա-
բեկչութեան դէմ պետականօրէն պայքարելու ընթաց-
ակարգին մասին մտեցումներ:

Հ. Յ. Դ. խմբակցութեան նախաձեռնութիւններու
շարքին են «Փտածութեան դէմ պայքարի մասին» եւ
«Տարածքային կառավարման մասին», օրէնքի նախա-
գիծերը: Խօսելով փտածութեան դէմ պայքարին առը-
չուող օրինագիծին մասին, Կարապետեան ըսաւ, թէ
համաձայնական դաշինքի քաղաքական խորհուրդը կը
քննարկէ խնդիրը եւ շուտով զայն պիտի ներկայացնէ
խորհրդարան:

Միւս կողմէ, երկար ժամանակ համաձայնական դա-
շինքի տարբեր կողմերուն միջեւ քաղաքական բանավե-
ճերու առաջնորդած հարցը, որուն նախանցեալ օր անդ-
րադարձած էր նաեւ Հայաստանի վարչապետ Անդրա-
նիկ Մարգարեան, մօտ օրէն պիտի քննարկուի համա-
ձայնական դաշինքի քաղաքական խորհուրդին կողմէ,
յայտնեց Ազգային ժողովի Հ. Յ. Դ. խմբակցութեան
ղեկավար ընկ. Լեւոն Մկրտչեան, երէկ:

Շար.՝ Էջ 10

ԻԼՀԱՄ ԱԼԻԵԻԻ
ՀԱԿԱՀԱՅ ՄՈԼՈՒՅՔԸ
Ի ՅԱՅՏ ԵԿԱՄԻ ԱՅՍ ԱՆԿԱՄ
ՄԱԿԻ ԱՄՊԻՈՆԵՆ

ԻՐԱՔ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԱՌԱՔՄԱՆ ՓՈԽԱՐԷՆ ԱՆԳԱՐԱ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԷՆ ԿՄԱԿԱԿԱԼԷ ՔԻԻՐՏԵՐՈՒ ԴԷՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱՆԳԱՐԱ, 25 (ԱՅՓ).- Անգարա կ'ակնկալէ, որ Մ.
Նահանգներ Հիւսիսային Իրաքի մէջ հաստատուած
թուրք քիւրտ ըմբոսներու դէմ քայլերու դիմեն փո-
խարարման քրքրական խաղաղարար ուժերու Իրաք
առաքման, յայտնած է Հիմզաքիի օր արդարութեան
նախարար եւ կառավարութեան բանբեր Շեմիլ Չիշէք
պատկերասփռուած հարցազրույցի մը մէջ:

Կ'ենթադրուի, որ ՔԱԿԻ շուրջ 5000 զինուորացի
ներ ապաստան գտած են Հիւսիսային Իրաքի լեռնե-
րուն վրայ: Այս ամիս խմբակը յայտարարած է, թէ
պիտի հրաժարի իր կողմէ հռչակուած չորս տարուան
միակողմանի զինադուլէն:

Անգարա եւ Ռաշիդկըն ՔԱԿը, որ ցնեւ ծանօթ է
ՔԱՏԵՔ անունով, ահաբեկչական կազմակերպութիւն
մը կը նկատեն:

Չիշէք ըսած է, թէ Թուրքիա «կ'ուզէ Իրաք երթալ
նկատի առած մեր շահերը, սակայն փոխարեւը յստակ
է, թէ ակնկալութիւններ ունիցն այն անձերն, որոնք
հետ պիտի գործակցին», աւելցուցած է ան:

Նախարարը յայտնած է, թէ կառավարութիւնը
կ'ակնկալէ, որ ուժերու առաքման գծով միջնեւ Հոկ-
տեմբերի կէսերը որոշում տայ եւ խորհրդարանը վա-
ւերացնէ գայն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ՝ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԴԵՍ ՊԱՆԱՏԱՆ

Հ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի Յանձնա-
խումբը շնորհակալական հետեւեալ հեռա-
գիրը յղեց Լիբանանի մէջ Չուիցերիոյ դես-
պանատան՝ Չուիցերիոյ 40 քանթոնի կող-
մէ Հայկական Յեղասպանութեան ճանաչ-
ման համար:

«Մեծայարք պրն. դեսպան,
«Սոյն հեռագիրով կու գանք մեր անկեղծ
շնորհակալութիւնը յայտնելու Չուիցերիոյ
40 քանթոնի իշխանութիւններուն, որոնք
հետեւեցան ժընեւի քանթոնի ողջունելի
օրինակին եւ իրենց կարգին պաշտօնապէս
ճանաչեցան Հայկական Յեղասպանութիւնը:
«Վստահ ենք, որ այս արդար քայլը աւելի
պիտի ամրապնդէ հայ - չուիցերիական յա-
րաբերութիւնները եւ ի վերջոյ պիտի յանգի
չուիցերիական պետութեան կողմէ Հայկա-
կան Յեղասպանութեան ճանաչման»:

ՆԻՒ ԵՆՈՐԵԻ ՄԷՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԽԱՐԱԶԻ ԵՒ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Հայաստանի ար-
տաքին գործոց նախա-
րար Վարդան Օսկան-
եան, որ Նիւ Եորքի մէջ
կը մասնակցի ՄԱԿԻ
58րդ Ընդհանուր Ժո-
ղովին, երէկ հանդի-
պում ունեցած է Իրա-
նի իր պաշտօնակի-
հետ: Քննարկուած են
երկկողմանի յարաբե-
րութիւնները, Միջին
Արեւելքի վերջին պար-
զացումները, Իրաքի
կացութիւնը եւ Միջա-
նիստանի իրավիճա-
կը: Անոնք անդրա-
դարձած են նաեւ Լեւ-
ոնային Ղարաբաղի
տագնապի լուծման
հեռանկարներուն եւ
հայ - թրքական յարա-
բերութիւններուն:
Նախարար Օսկան-
եան հանդիպում ունե-
ցած է նաեւ Հոլանտա-
նի արտաքին գործոց
նախարար Եապի Տը
Հուի Շեֆրիի հետ եւ
Հուի Շեֆրիի հետ է
շնորհաւորած է Օթ-
Նի ընդհանուր քար-
տուղար անոր նշանա-
կուով: Անոնք քննար-
կած են Հայաստան -
ԵԱՀԿ համագործակ-
ցութիւնը եւ ԵԱՀԿի
Երեւանի գրասենե-
կին առնչուող հարցեր,
շրջանային խնդիր-
ներ, ինչպէս նաեւ Շե-
ֆրիի հարաւային կով-
կաս յարաբերակցի
լուծման մանրամաս-
նութիւնները:

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱՂԸ
ԱՅՍՈՐ ՏԵ ՖԱՔԹՕ
ԿԱՅԱՅԱԾ ՊԵՏՈՒԹԻՒՆ Է»

ԷՁ 5

ԻՍՐԱՅԷԼ ԱՅԻ ՕԴԱԶՈՒՆԵՐ ԿՐՆԱՆ ԲԱՆԱԿԷՆ ԱՐՏԱՔՍՈՒԻԼ՝ ՀՐԱՀԱՆԳԻ ԶԵՆԹԱՐԿՈՒԵԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 25 (ԱՅՓ).- Իսրայէլեան օդուժն իսկ մը օդաչուներ,
որոնք մերժած են մասնակցիլ պաղեստինեան շրջաններու մէջ գործ-
դուրսներու, պաշտօնակրուելու եւ օդուժն արտաքուելու սպառ-
նալիքին ենթակայ են:

Պահեստի 27 օդաչուներ աղերսագիր մը ներկայացուցած են օդուժի
հրամանատար Տան Հալուցի, յայտնելով, որ պատրաստ չեն շարունակե-
լու գործողութիւնները, որոնք ապօրինի են: Հալուցի իր կարգին սպառնա-
ցած է արտաքուէլ օդաչուները, եթէ վերատեսութեան չենթարկեն իրենց
կեցուածքը: Հալուցի աւելցուց, որ յիշեալ օդաչուները փոքրամասնու-
թեան մը մէջ փոքրամասնութիւն են, որոնք կ'ուզեն քաղաքական կեց-
ւածք մը արտայայտել, որ կապ չունի բարոյական սկզբունքներու հետ:
Վարչապետ Արիէլ Շարոն եւս պոռնացուց օդաչուները, պահանջելով, որ
քաղաքական խաղերու մէջ չիյնան:

Օդաչուներէն մէկը ըսաւ, որ նախապէս հպարտ կը զգար, որ Իսրայէլի
օդուժին մաս կը կապմէր, մինչ հիմա՝ ամօք կը զգայ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՏԻԼ իրարօգնութեան սնունդը ուրախ է
յայտարարելու, թէ 2003-2004 տարեշրջանին հա-
մար պիտի շարունակէ նախորդ տարի հաս-
տատած հայ համալսարանականներու կրթական
ֆոնդը:

ԱՅՏԻԼ կրթական ֆոնդին կրճատ օգտուիլ
հայ համալսարանականներ (Ա. տարիէն
սկսեալ):

Դիմումագիրները կրճատ ստանալ ԱՅՏԻԼի
գրասենեակէն, «Արիմ» շէք, Դ. յարկ, Սեպտեմ-
բեր 29-ն Ընկտեմբեր 6, 2003:

ԱՅՏԻԼ իրարօգնութեան սնունդը շնորհա-
կալութիւն կը յայտնէ բոլոր իր անդամներուն,
որոնք առաջին օրէն ներկայ կանգնեցան եւ հա-
ւատացին իր առաքելութեան:

ԱՅՏԻԼ

«ԱԶԳԱԿ»-Ի ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՐՅԱՆՔ

«Ազգակ» իր այս թիով կը ներկայացնէ լիբանանեան մշակութային կեանքին վերաբերող մրցանք մը, որ կը բաղկանայ միայն մէկ հարցարանէ: Վեց հարցումներուն ճիշդ պատասխանողներուն մէջէն վիճակագրութեան փոխ ընտրուի բախտաւոր մը: Մրցումին նուէրն է գեղանկարիչ Յովսէփ Գասպարեանի գործերէն մէկը:

Մրցումին պատասխանները «Ազգակ»-ի խմբագրատունը հասցնել մինչեւ Շաբաթ, 27 Սեպտեմբեր 2003: Նշենք, որ մրցանքի կարելի է մասնակցիլ մէկէ աւելի կտրոններով, սակայն լուսապատճէն կտրոնները չեն ընդունուիր: «Ազգակ»-ի անձնակազմի անդամները չեն կրնար մասնակցիլ այս մրցանքին:

ՀԱՐՅԱՐԱՆ
1.- Ի՞նչ կը կոչուի լիբանանահայ ռոք երգիչներու համախմբումը:

2.- Տուր լիբանանահայ երեք արուեստի ցուցարաններու անունները:

3.- Պիպլոսի միջերկրականեան փառատօնը այս տարի կրե՞ք կարելու փոփոխութիւն մը: Ան ինչի՞ վերածուեցաւ:

4.- Լիբանանեան ո՞ր փառատօնն է, որ Պէյրուի փողոցներուն մէջ կը կազմակերպէ իր յայտագիրները:

5.- Տուր անունը Լիբանանի պետական սինֆոնիք նուագախումբի հայ ղեկավարին:

6.- Ֆէյրուլի լիբանանեան երգահանդէսները ո՞ր փառատօնին ծիրէն ներս տեղի կ'ունենան:

Անուն -----
Մականուն -----
Հասցէ -----
Հեռաձայնի թիւ -----

ԶԵՀԻ ՈՒԱՀՊԻ «ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»ԷՆ

Պատկերասփիւռի «Սուրբաբայալ» կայանի խօսնակ եւ յայտագիրներու խմբագիր ԶԵՀԻ ՈՒԱՀՊԻ ԵՐԵՂՅԱՊԵՏԻ, 30 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին կը պատասխանէ ՀԱՆԱ ՀԱՍՏԱՏԻ հարցումներուն:

ԻՐ ԱՒԵԼԻ ՔԱՆ 80 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՓՈՐՉԱՆՈՒԹԵԱՄԸ Հ. ԳԱՐԱՎԷՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ԼԱՒԳՈՅՆ ԿԵՐՊՈՎ

ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԵՒ ՉԱՓՈՎԱՍԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵ ԿԵՆՔԻ ՀԱՄԱՆՍՏԱՐԱՆԻՆ

● ՊԱՐՄԱՆՈՒԹԻՒՆԵՐ, եթէ առիթ չէք ունեցած Միջնակարգ ուսման, վստահ եղէք, թէ անմասն պիտի չմնաք կեանքի այս հաճոյքէն, եթէ հետեւիք ձեզի համար պատրաստուած յետմիջօրէի ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԴԱՍԻՆՐԱՎԿՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՆՁԱՅԻՆ

Հայեցի եւ քրիստոնեական մթնոլորտի մէջ կը ջարմուրի պարմանուի ձեր անհատական կերտող, միտքը գարգացնող, գեղարուեստական ձիրքերը քաջակերող, ձկուն մատներ պատրաստող եւ մանաւանդ իր եւ իր շրջապատին առողջութեան սատարող դասագիրքեր, մօտէն հետեւելով իրաքանջիւր աշակերտի մակարդակին:

● ԱԶԵՍԱՆՈՂ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԿՍԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴԱՍԵՆՁԱՅԸ
Օգտագործելով շաբթուան մէջ երեք երեկոներ կարելի է տիրանալ հայերէն եւ օտար լեզուներու գիտութեան, հաճելի ժամանցի պահերու կողքին: ԱՌՈՂՋԱԿՈՒԹԵԱՆ ԶԳՐՏՈՒԹԵԱՆ ԿԱՐՑԵՆՈՂՈՒԹԻՒՆ

Մասնագիտական յատուկ ցուցմունքներ մանուկներուն եւ պատանիներուն համար, որոնք ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ դժուարութիւններ ունին:

● ԱՐԴԻԱԿԱՆ ԵՒ ԱԲՆԱԿԱՆ ԽՈՒՍՆՈՅ Այրերու եւ կանանց համար՝ եփելարուեստ, արհեստ եւ սննդագիտութիւն:

● ԾԿՈՒՆ ՍԱՏՆԵՐ, ՆՈՒՐԲ ՃԱՆԱԿ, ԱՐՇԵՍՏԱԿԱՐԺՈՒԹԻՒՆ, ԶԵՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՐԻ ԴԱՍԵՆՁԱՅԸ

● ՍԱՐԲԱՍԵ, ՀՈՒՆԱԶԱՐՈՒԹԻՒՆ, ՍԱՐԱԶԻ ԳՈՐԾ
Եւ այլ դասընթացներ՝ զարգացնելու համար իզական սեռին հնարամտութիւնը եւ ընտանիքին նկարագրական օժանդակութիւն ապահովելու կարողականութիւնը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ
Պէյրուս, 23 Սեպտեմբեր 2003

ՀԱՃՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 83ԱՄԵԱԿ ՄԱՏԱՐԻ ԱՒՆԴԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Հաճոյ հերոսամարտի նահատակներուն նուիրած աւանդական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 18 Շուկտեմբեր 2003ին:

Շտեմբեր՝ կոչ կ'ուղղենք բոլոր հայրենակիցներուն, որ իրենց նիւթական, մատաղու ոչխար կամ նուիրատուութիւնները փոխանցեն Ս. Գեորգ եկեղեցւոյ խորհրդատունը (ցերեկը) եւ շրջող համգանակիչներուն:

ՀԱՃՈՅ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. ԹՐԻՓՈԼԻԻ ՄԱՍՆԱԳԻՂ

ԱՆՂԱՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ Գ. ՆԻՍՏ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 27 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 6:30ին, «Նաւասարդ» ակումբի «Մ. Պայիկեան» սրահին մէջ:

ԾԱՆՕԹ.- Ներկայաներու թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱՍՈՒՏ

Ս. ԽԱՆԱՍԻՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԱՐՄԱՆՈՒՄ

Տանար, հեռ. 891545

1.- 2003-2004 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին մտն օր, բացի Շաբաթ օրերէն, ժամը 8:30էն 1:00

2.- Վերամուտ
Ա.- Նախակրթարանի եւ Միջնակարգի վերամուտը՝ Հինգշաբթի, 2 Շուկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 7:30ին:

Բ.- Մանկապարտեզի վերամուտը՝ Երկուշաբթի, 6 Շուկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 7:30ին:

3.- Ուրախութեամբ կը յայտնենք, որ Ազգ. Իշխանութեան Պատկ. Ուսումնական Խորհուրդի որոշումով, 2003-2004 կրթական տարեշրջանի վարժարանի մանկապարտեզի ծնողները գերծ պիտի մնան կրթաթոշակի պարտաւորութենէ: Իւրաքանչիւր աշակերտի համար պիտի գանձուի տարեկան միայն 150,000 Լ. ո., իբրեւ մուտքի տուրք:

4.- Օրօքարի սպասարկութիւնը ապահովուած է բոլոր շրջաններուն համար:

5.- Յաւելեալ մանրամասնութեանց համար դիմել տնօրէնութեան:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ՊԱՐԻ «ԲԱՐԵՎԱՍՏՈՒԹԻՒՆ»

ԱՆՍԱՄՊԼԻՆ ԵՆՈՅԹԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

Հայաստանի պարի պետական «Բարեկամութիւն» անսամբլին ելոյթներուն առիթով, որոնք տեղի պիտի ունենան ԵՆՈՅԹԵՐՈՒՆ ԵՐԵՂՅԱՊԵՏԻ, 2 ԵՒ ՇԱԲԱԹ, 4 ՇՈՒԿՏԵՄԲԵՐ, ԵՐԵՂՅԱՊԵՏԻ ԺԱՄՈՒՆՈՒՄ 8:30ին, «Վանայ Չայն»-էն լսեցէք հարցազրոյց մը ՄԱՐՏԻԿ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ԵՒ ԱՐՄԵՆ ԱՊՏԱՆԵԱՆԻ հետ Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2003, առաւօտեան ժամը 11:00ին:

ՉԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՐՈՒ Է

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»ԷՆ ԱՄԵՆ ԵՐԵՔՐԱՐԹԻ ԼՍԵՑԷՔ «ՏԵՍԱԿԵՏ» ՅԱՅՏԱԳԻՐԸ

Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին «ՏԵՍԱԿԵՏ» յայտագիրին միւթն է

«ՀԱՅՐԵՆԻ ԵՒ ՍՓԻՌԵԱԿԱՅ ՊԱՐԱՐՈՒԵՍՏԸ»

Կը խօսին՝
ԳԱՐԻՆԱ ԱԼԵՔՍԱՆՏԵԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԵՀՐԱԲԵԱՆ

Յայտագիրին ամբողջ տեղողութեան հեռաձայնեցէք «Վանայ Չայն»՝ 01-241199 եւ 01-267657 թիւերուն, ու տուրք ձեր կարծիքը:

ՄԵԿ ՀՈՎՏԵՄԲԵՐԸ ՍԿՍԵԱԼ «ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»ԷՆ ՀԵՏԵԻՅԵՔ ՆՈՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ, ՈՐՈՒՔ ԿԸ ԳՈՂՋԱՅՆԵՆ ՈՒՆԿՆԻՐՆԵՐՈՒ ՏԱՐԵՐ ԽՈՒՄԵՐ: ՀԵՏԵԻՅԵՔ ՄԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒ ԻՄԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

السفر **النصر** **الديار** **الاستقبل** **الاتحاد**

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Լիբանանեան դրամատուներուն հարցերը եւ ՄԱԿԻ 58րդ Ընդհանուր Ժողովին արտաքին գործընթացները ժամ Օպէյտի ունեցած էլոյթը կը հանդիսանայ լիբանանեան կեանքին վերաբերող տեղական օրաթերթերուն հիմնական լուրերը:

Միջազգային եւ շրջանային լուրերու կարգին գլխաւոր տեղ կը գրաւեն պաղեստինեան եւ իրաքեան հարցերը եւ այդ շրջաններուն մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները:

«Տիար» գրած է, թէ Եւրոպայի պաղեստինեան շրջաններու մէջ: «Լիւուս»-ի համաձայն, Շալոմ կը իրատուանի, թէ Եւրոպայի եւ Ռաշիւկըրի միջեւ տարակարծութիւններ գոյութիւն ունին ապահովութեան պատին առնչութեամբ: «Քիֆաի Արապի» գրած է, թէ Համաս կը մերժէ որեւէ համաձայնութիւն Եւրոպայի հետ:

ԻՐԱԶԵԱՆ ԻՐԱԿԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

«Անուար» նշած է, թէ Քենտի յայտարարեց, որ Իրաքի դէմ պատերազմը խաբէբայութեամբ գործողութեամբ արարք մըն էր, իսկ Պուշ միլիտանտներով կիշար տուած է ամերիկեան զօրքերը ի գործ դնելու համար: Ըստ թերթին, ամերիկացի եւ բրիտանացի 1400 մասնագէտները կը հաստատեն, թէ Իրաքի մէջ կործանարար փէյքեր գոյութիւն չունին: Ըստ «Տիար»-ի, ամերիկեան աղբիւրները հաստատած են, որ Իրաքի մէջ կործանարար փէյքեր գոյութիւն չունին, իսկ Պուշ յայտարարած է, որ Գերմանիոյ հետ տարակարծութիւնները վերջ

«Տիար» գրած է, թէ Եւրոպայի պաղեստինեան շրջաններու մէջ: «Լիւուս»-ի համաձայն, Շալոմ կը իրատուանի, թէ Եւրոպայի եւ Ռաշիւկըրի միջեւ տարակարծութիւններ գոյութիւն ունին ապահովութեան պատին առնչութեամբ: «Քիֆաի Արապի» գրած է, թէ Համաս կը մերժէ որեւէ համաձայնութիւն Եւրոպայի հետ:

«Անուար» դիտել տուած է, թէ Տուպայի գահաժառանգը հաստատած է, թէ Եւրոպայի հետ յարաբերութիւններ պիտի չմշակէ, այնքան ստեղծ որ պաղեստինցիներուն մղձաւանջը կը շարունակուի:

Ըստ «Տիար»-ի, գերիներու փոխանակման հարցով ստեղծուած տեղեկատուական յայտարարութիւնները մէջ Եւրոպայի կը իրատուանի, թէ Տուպայի գահաժառանգը հաստատած է, թէ Եւրոպայի հետ յարաբերութիւններ պիտի չմշակէ, այնքան ստեղծ որ պաղեստինցիներուն մղձաւանջը կը շարունակուի:

Ըստ «Տիար»-ի, գերիներու փոխանակման հարցով ստեղծուած տեղեկատուական յայտարարութիւնները մէջ Եւրոպայի կը իրատուանի, թէ Տուպայի գահաժառանգը հաստատած է, թէ Եւրոպայի հետ յարաբերութիւններ պիտի չմշակէ, այնքան ստեղծ որ պաղեստինցիներուն մղձաւանջը կը շարունակուի:

ՀԱՅՐԵՆԻ ԵՒ ՍՓԻՐԵԱԿԱՅ ՊԱՐԱՐՈՒԵՍՏԸ

Կը խօսին՝
ԳԱՐԻՆԱ ԱԼԵՔՍԱՆՏԵԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԵՀՐԱԲԵԱՆ

Յայտագիրին ամբողջ տեղողութեան հեռաձայնեցէք «Վանայ Չայն»՝ 01-241199 եւ 01-267657 թիւերուն, ու տուրք ձեր կարծիքը:

ԱՅԿԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

• Over Bed Table
• All Kinds Of Oxygen
We Also Provide
• Laboratory service.
• Physiotherapist
• Nurses Aids
• P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆՏԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ԸՆԵՔ, Բ. ՅԱՐԿ ԵՆՈ. (02) 242553/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

معهد بيبولوس للتعليم المهني والتقني

سوق العمل مشروع أمام خريجي معهد بيبولوس

كن واحداً منهم

في نهاية كل سنة دراسية، تتخلفت الشركات والمؤسسات اللبنانية والعالمية للتعاقد مع الخريجين من خريجي معهد بيبولوس خلال شهر تموز ٢٠٠٣. حضر السيدان جورج كندرجي وفارس خليل من قبل شركة "موسيس نيز" في قطر وتعاقدوا مع بعض الخريجين في قطاع السيارات للعمل لدى الشركة المذكورة بعد أن خضعوا بنجاح لاختبارات خاصة في هذا المجال. كما اختارت البعثة عدداً آخر من خريجي المعاهد الصديقة مشترطة عليهم أن يعضوا فترة إعادة تدريب وتأهيل في مختبرات ومشاغل معهد بيبولوس لإبرام عقود العمل معهم بشكلها النهائي. منذ عدة عقود حتى اليوم لا تزال شركة "موسيس نيز" إلى جانب العديد من الشركات العالمية الكبرى، تختار المهنيين والتقنيين في الاختصاصات المختلفة من قدامى وخريجي "معهد بيبولوس".

• ميكانيك وكهرباء والكترونيك السيارات
• تقني تشخيص أعطال السيارات

روبيع خاتيرت بقران
فاهي جان طرافيجيان
نجيب بيبول المصري
وليد الياس الملوغ
روبيع مخايل سكر
فادي سايد نقولا
باسم جميل حاظم
إيلي أسكندر الستري

محمد نجيب الحمرا
فادي يوسف العرب
فؤاد ريمون ضاهر
جاك بطرس عقيقي

الدورة - بداية الضمان ٠١ ٨٨٤٠٠
قرن الشياك ٠١ ٢٩٢٥٦
عين زحلقة ٠٥ ٢٣٠٤٠

Նորաստիճակի Նորաստիճակ

ԱՄՏԻՃԱՆՆԵՐ ԴԵՊԻ ԵՐԿԻՆՔ

ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ ԴՐԱՄՏԸ ԿԸ ՉՏՆՈՒԻ ԼՈՆՏՈՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՇԻՆ ՄԵՋ: «ԻՆԹԵՐՆԵՇՆԸԼ ՇԵՐԸՆ ԹՐԻՊԻՈՒՆ» ՕՐԱԹԵՐԹԻ ԱՐՈՒԵՍԻ ԽՄԲԱԳԻՐ ՍՈՒՐԵՆ ՄԵԼԻՔԵԱՆ ԿԸ ՆԿԱՐԱԳԵ, ԹԵ ԴԱՐԵՐՈՒ ԸՆԹԱՅԻՆ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԿԵՐԱՅ ԵՆ ՁԱՅՆ



Պրիկել «Ադամն ու Եւան Եդեմական պարտեզին մէջ» գեղանկարը գծած է 1615ին:

Դրախտի պատկերումին գաղաթնակէտը: Հրեշտակներու աշխարհը կը վերջանայ այստեղ: Աւելի քանստեղծական մտեցում մը կիրարկուած է Եւան Պրիկելի արուեստանոցին մէջ, ուր գծուած է «Ադամն ու Եւան Եդեմական պարտեզին մէջ» գեղանկարը: Ամուր պատկերուած է անտառի մը մէջէն անցնող ծառուղիի մը խորքերը, եւ անոնք արծաթափայլ կերպարները հաջիւ տեսանելի են:

Գեղանկարին բուն նիւթը արարչագործութեան հարուստ յայտագրութիւնն է: Յովազներ նստած են իրենց գոյուծեան անտարբեր ձիւրէքի մը հետեւ, եղնիկ մը նոյնքան անվրդով երեւոյթ մը ունի, թեւեւ մը կիտեմուտէն՝ դուրս կուգայ աւագանի մը եւ իր գիրուկ թեւերը կը թափանցէ գինք դիտող թուլակի մը, բուռ մը եւ անտերեւ ծառի մը վրայ թաւած այլ թռչուններու առջեւ: Կը թուի, թէ զրախտի մէջ կլիմայական ծայրայեղութիւնները դիւրութեամբ կը խառնուին իրարու: Այս գեղանկարը եւրոպացի արուեստագետի մը կողմէ զրախտ պատկերելու վերջին փորձերէն էր եւ կ'ապացուցէ, թէ խոր հատկութիւնը համոզուած արդէն բացակայ էին:

Նոր ժամանակաշրջան մը կը յաջորդէր: Գեղանկարիչներ կը պատկերէին կատարեալ աշխարհ մը կամ «հրեշտակներու պարտեզը»: Յունական եւ հռոմէական դիցաբանութիւնը կատարեալ պատմաբանութիւն մը կ'ընթացէր ընտելեան գեղանկարչութեան եւրոպական երազը պատկերելու համար:

Քլոտ Լորէնի «Նարգէս եւ էքօ» գեղանկարին մէջ (գծուած է 1644ին) հովուներգական տեսարան մը կը շողայ արեւու ոսկեգոյն լույսի մէջ, մինչ մուլթը կ'իջնէ խորագրերի վրայ: Շտտ մանրակազմ նարգէս մը կը հակի աւագանի մը սեւ ջուրերուն վրայ՝ դիտելու համար արտացոլացումը իր դէմքին, որ այնքան համակած է գինք: Խեղճ էքօն, այն յաւերժահարսը, որուն արձանարձակ է Նարգիսը, նիհար կերպար մըն է, որ կը յայտնուի աւագանին հանդիպակաց հրուանդանին վրայ: Երկուքին ներկայութիւնը

խորքին մէջ պատրուակ մըն է բուն նիւթը՝ բնութեան գեղեցկութիւնը պատկերելու:

Շուտով նորաձեւութիւն դարձաւ մարմնական հաճոյքներ պատկերող տեսարաններու յաւերժացումը: Անիկա սկիզբ առաւ Իտալիոյ մէջ: Կարոֆալոյի «Սիրոյ այլաբանութիւն» գեղանկարը, բնութեան մէջ ընկող մանած ամուրի մը ցանկալարոյց դիրքով՝ «սարսափ առթած է 1860ին, երբ առաջին անգամ ցուցադրուած է Լոնտոնի Ազգային պատկերասրահին մէջ», ինչպէս կ'ըսէ ցուցահանդէսին պատկերագիրը: Այսօր սարսափելին գեղանկարին տափակութիւնն է:

Բաւական այլանդակ էին 17րդ դարու շուկայութեան տեսարաններ պատկերող գեղանկարները, իրենց աժան սեռայնութեամբ կամ ընկերային ծաղկումով: Դրախտ մը կամ կատարեալ աշխարհը հաւասարապէս հեռուոր կը թուին ըլլալ անոնց մէջ:

Իրապաշտութիւնը յաջորդեց: Լուի ԺԴ-ի եւ Լա Փոմփատուրի ժամանակներուն պալատական թեթեւ ժամանցի ջողին տակ մարմնական հաճոյքներու պատկերումը իբրեւ նիւթ՝ փոխարինեց յունական եւ հռոմէական դիցաբանութիւնը:

Ուաթոյի «Սիրոյ կշիռը» գեղանկարը կը պատկերէ սնդուսէ իր փարթամ հագուստը խոտին վրայ տարածած հարուստ կիւն մը: Ան դարձած է դէպի կարմիր այտերով միջին տարիքի մարդ մը՝ քումետիա տէլ արթէի յատուկ տիպարի մը վարդազոյն տարագով եւ կիթառ ձեռքին: Քիչ մը հեռու տեղադրուած հարցական նայուածքով փրիլտոփայլ մը կիսանդրին ծիծաղաշարժ է: Գեղանկարը այնքան խնցնողոր չի նկատուիր այսօր, որքան Լուի ԺԳ-ի ժամանակներուն: Անիկա կը պատկերէ ոչ այնքան կատարեալ, որքան՝ անյարմար աշխարհ մը:

Արեւմուտքը այլեւս չէր փնտրուիր զրախտը կամ կատարելութիւնը: Անիկա երկինքին կը ձգտէր՝ երկիրը մանրագնին քննութեան ենթարկելով:

Գեղանկարիչներ սկսան գիւղական գեղեցիկ տեսարաններ պատկերել անոնց ամէնէն անկարեւոր մանրամասնութիւններով: 1826ին Քոնսթանտինոպոլի մէջ իր «Կորեկի դաշտը»: Այնուհետեւ գեղանկարիչներ սկսան վայրի բնութիւնը պատկերել բանաստեղծական թրթիռներով, դիտուած՝ մշուշի մը ընդմէջէն, որ կ'աղօտէ ուրուագիծերը: Անոնց փնտրուածքը յանգեցաւ լույսի ուսումնասիրութեան: 1899ին, երբ Մոնէ գծեց Ժիվեռնիի ջրաշուշանները, վերահաստէ շարժումը հեռու չէր:

Այնուհետեւ յառաջապահական արուեստի հետեւորդները զրախտի կամ երկրային կատարելութեան բոլոր գաղափարներէն հրաժարեցան այնպիսի աշխարհի մը մէջ, ուր քիչեր կը կարողային Աստուածաշունչը կամ գասական հին գործերը:

(ՅԱՊԱՌՈՒԱՄ)

ԱԿԱԹԱ ՔՐԻՍՏԻԻ ՄՈՌՅՈՒԱԾ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ



Ոճրային պատմութիւններու հաշակաւոր հեղինակ Ակաթա Քրիստիի մոռցուած մէկ թատերգութիւնը լոյս աշխարհ եկած է գրուելէն 70 տարի ետք:

Ակաթա Քրիստի ծանօթ է իր ստեղծած պերճաբար գաղտնի ոստիկան Հերբել Փուլարոյի երեւակայական տիպարով: Ան նաեւ հեղինակն է աշխարհի մէջ ամէնէն աւելի երկար ներկայացուած «Մաուսթրէփ» թատերխաղին:

Սակայն «Տը սիբրըթ աֆ չիմնիգ» (ծխնելոյցներու գաղտնիքը) թատերգութիւնը, գոր ան գրած է 1925ին, մոռցուած կը մնար Բրիտանական գրադարանին նկուղներուն մէջ եւ միայն նորի յայտ եկած է:

Թատերգութեան նիւթը լրտեսական պատմութիւն մըն է, տեղադրուած՝ 1930ական տարիներու եւրոպական քաղաքականութեան մէջ: Անոր առաջին բեմադրութիւնը տեղի պիտի ունենայ Հոկտեմբերին, Քանադայի մէջ:

Քրիստիի միակ թրունիկը՝ Մաթիւ Քրիքարտ կ'ըսէ, թէ ինք ոչինչ գիտէր, երբ Քանադայի Քալիբրի քաղաքէն բեմադրիչ մը նամակով մը իրեն տեղեկացուեցաւ թէ ցարդ չբեմադրուած այս թատերգութեան մասին:

Քրիքարտ Բրիտանական գրադարանէն խնդրած է փնտրել թատերգութիւնը: Գրադարանը պարտաւոր է օրինակ մը պահել իւրաքանչիւր թատերգութեան: Եւ իրօք, պաշտօնեաները գտած են «Տը սիբրըթ աֆ չիմնիգ» մէկ օրինակը: Անիկա երբեք չէր բեմադրուած:

Քրիքարտ թատերախաղը կարգայէ ետք «Պի. Պի. Սի.»-ի բաժնէ. «Չեմ կարծեր, որ արդարացուցիչ պատճառներով մոռցուած է այս գործը: Պատճառը հաւանաբար այն էր, որ անիկա Ակաթա Քրիստիի յատուկ ոճի տեղեկութեամբ մը չէր բովանդակեր: Երբ մեծ մայրս սկսաւ «Մաուսթրէփ»-ի եւ «Ուիթնէս աֆ ար փրոսթիւուշըն»-ի նման թատերգութիւններ գրել, հանրութիւնը սկսաւ նման գործեր ակնկալել իրմէ: Բեմադրիչներ եւ արտադրիչներ կը պահանջէն դիւրին վաճառելի գործեր, կամ գէթ այդպէս էր մեծ մօրս ժամանակներուն: Կը կարծեմ, որ նոյնիսկ թիժ անոնք տեղեկալ ըլլալին այս գործին, հաւանաբար պիտի շարունակէին բեմադրել ոճրային պատմութիւնները»:

Իր մեծ մօր թատերական շնորհը եւ հանդիսատեսին հաճելի ժամանց պարգեւելու կարողութիւնները գովելով՝ Քրիքարտ կ'ըսէ. «Կը կարծեմ, որ այն թերագնահատուած է իրեն թատերագիր եւ այս թատերախաղը անոր փաստը պիտի ըլլայ»:

ԱՂՋԻԿՆԵՐԸ ԵՒՍ ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՁԱՅՆ ՈՒՆԻՆ

ԲՐԻՏԱՆԻՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՄԻՆՉԻՒ ՎԵՐՋԵՐՍ ՄԻԱՅՆ ՄԱՆՉԵՐ ԿԵՐԳԵԻՆ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԳՐԵ ԱԲԱՆՊԻԹԵԱՆ ՍԸ ՅԵՂԱՅՐՁՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ



Աւանդապահներ կ'ըսեն, թէ եկեղեցական երգչախումբերու մէջ ոչ ոք նոյնքան լաւ կ'երգէ, որքան՝ պատանիները, եւ թէ՛ միեւնոյն տարիքի աղջիկներ չեն կրնար մըցիլ անոնց ձայնի որակին հետ:

Սակայն Եորքի համալսարանէն դասախօս մը՝ Տէյվիտ Հաուլը մարտահրաւեր կ'ուղղէ 500 տարուան աւանդութեան մը, երբ կ'ըսէ, թէ 130 հոգի միեւնոյն երգելու մասնչեղ եւ աղջիկներու մեկնաբանութեամբ լսելի ետք խորտակած են վաղուց արմատացած սեսուլութիւնը:

«Կը կարծեմ, թէ կայ վիճը գլխաւորաբար սեռային է եւ ոչ մէկ այս ունի երաժշտութեան հետ, - կ'ըսէ ան: - Երբ նոյն երաժշտութիւնը, նոյն երգչախումբը, նոյն խմբավարը եւ ձայնալիքն նոյն պայմանները կը տիրեն եւ միայն երգչախումբին անդամները կը փոխուին, կարելի չէ տարբերութիւնը գգալ»:

Բրիտանիոյ մայր եկեղեցիներուն մէջ մինչեւ վերջերս երգչախումբերը միշտ արական եղած են: Պատանիներ կ'երգէին թրեւրի ձայնով, սովորաբար՝ ալթօ, թենոր եւ վաս: 1991ին մայր մը եւրոպական ատենանին միջոցով մարտահրա-

ւէր ուղղեց աւանդական օրէնքին՝ ըսելով, թէ իր աղջիկը աւելի լաւ կ'երգէր, քան իր մանչը: Այնուհետեւ Բրիտանիոյ եկեղեցիներուն պատուիրուեցաւ հաւասար առիթ տալ աղջիկներուն:

Հաուլը «Իվընսոնկ» կրօնական երգը արձանագրած է յաջորդաբար երկու օրերու ընթացքին, օր մը մանչերու եւ օր մը աղջիկներու մեկնաբանութեամբ: Ունկնդիրներ ձայնագրութիւններուն մէջ չեն կրցած զատորշել երգչախումբերուն արական կամ իգական բնոյթը: Անոնց միայն 53 առ հարիւրը գանազանած է երգչախումբին անդամներուն սեռային պատկանելութիւնը:

Հակառակ եւրոպական ատենանին որոշումին եւ աղջիկներու երգչախումբերու կազմութեան պահանջին, Բրիտանիոյ եկեղեցիները տակաւին քայլեր չեն առած խառն երգչախումբեր կազմելու: Անոնք այժմ ունին արական եւ իգական երգչախումբեր, որոնք հազուադէպօրէն միասին կ'երգեն:

«Աղջիկներ աւելի հակամէտ են ունենալու աւելի շնչաւոր եւ խիտ ձայներ, իսկ մանչեր ձայնամարզումի հետեւելէ ետք կ'ունենան հաճելի եւ բիւրեղ ձայներ, ինչ որ շատ յատուկ է: Սակայն ստիկա կարելի է նկատել, երբ առանձին եւ յաջորդաբար կը յսենք երգելու մը եւ մանչի մը ձայնը, - կ'ըսէ Հաուլը: - Իսկ երբ անոնք խառն երգչախումբի մէջ կ'երգեն, խմբավարը կը փորձէ միատարր ձայն մը ունենալ եւ անոր «գործընթաց» կը դառնան մանչերը»:

Հաուլը իր համաձայն, հաւանաբար երգչախումբերու ղեկավարներ պիտի ուզէին իրենց ձայնային «գործընթացը» տարբեր ձեւերով գործածել: «Թերեւս խմբավարներ կը մտածեն, թէ աւանդական երգչախումբը մանչերու երգչախումբն է, գոր պիտի ուզէին պահպանել, իսկ այժմ ունին նոր բան մը՝ աղջիկներու երգչախումբը, որուն պէտք է յարմարին»:

ՍԻՊԵԼԻՈՒՍԻ ԿՈՐՏՈՒԱԾ ԽԱԶԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Սիպելիուս ապրած է 1865էն 1957

Ֆինլանտացի ազգային երաժիշտ Սիպելիուսի չորս երգերուն խաղաղութիւնները, որոնք կորսուած կը համարուէին, յայտնաբերուած են զրամատան մը նկուղին մէջ: Թէեւ խաղաղութիւններուն գոյութիւնը ծանօթ էր, սակայն կ'ենթադրուէր, թէ անոնք կորսուած էին, որովհետեւ ոչ մէկ արձանագրութիւն կար անոնց վերաբերելու:

«Պի. Պի. Սի.»-ի, որ կը հաղորդէ լուրը, կ'ըսէ, թէ Ֆինլանտացի պետութիւնը կը ծրագրէ ձեռագիրները ցուցադրել Սիպելիուսի նուիրուած թանգարաններէն մէկուն մէջ:

Յայտնաբերուած խաղաղութիւնները կը պատկանին 12 երգերէ բաղկացած շարքի մը, գոր Սիպելիուս յօրինած է իր նախասիրած երգչուհիին՝ Իտա էքմանի համար: Մնացեալ 8 երգերուն ձեռագիրները մաս կը կազմեն Ֆինլանտային դուրս գտնուող հաւաքածոներու:

տէ Ֆինլանտացի ազգային ժառանգութեան կատարելու մէկ մասը:

Սիպելիուս հաշակաւոր է իր վիպերգական եւ ազգային երաժշտութեամբ: Ան կը նկատուի իր երկրին ամէնէն ակաւաւոր մշակութային դեսպաններէն մէկը: Ֆինլանտա Ռուսիայէն անկախացաւ 1917ին: Անկէ առաջ Սիպելիուս սերտ կապեր ունէր իր երկրին ազգայնական շարժումին հետ:


Սիպելիուսի երաժշտութիւնը ներշնչուած է Ֆինլանտացի վայրի բնութեան պատկերներէն: Անոր հաշակաւոր գործերէն են «Ֆինլանտիա»-ն եւ «Վաս թրիսթը»: Սակայն այս երաժիշտը երբեք չէ ստեղծագործած իր կեանքին վերջին 30 տարիներուն:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՆՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգային» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիր խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՐ ԵՐԵՎԱՆԻՍԻ ՓԱՄԸ 5:00: ՄԱՀԱՂԱՉԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահապէ կ'ընդունուի միջուկ ու զիջել, այնքան ատեն որ պայմ հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ՊԱՍԵՏՊՈԼ

ԼԻԲԱՆԱՆ ԱՆՑԱԲ Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Ասիոյ պասեթպոլի ախոյեանութեան Ա. հանգրուանի մրցումներուն, իր կատարած երեք մրցումներուն ալ յաղթանակ արձանագրելով Լիբանանի տղոց ազգային խումբը, որ մաս կը կազմէ Ա. խմբակին, ապահովեց քառորդ աւարտականի իր տոմսը:

Իր կատարած վերջին մրցումին Լիբանան 88-60 արդիւնքով պարտութեան մատնեց Ուզպեքիստանը, որ Հոնկ Գոնկի հետ դուրս մնաց մրցաշարէն: Լիբանանի հետ քառորդ աւարտականին իր տոմսը ապահովեց Ղազախստան, որ իր միակ պարտութիւնը կրեց Լիբանանէն:

Մնացեալ խմբակներէն, քառորդ աւարտականին իրենց տոմսը ապահովեցին՝ Հարուային Քորէա, Հնդկաստան (Բ. խմբակ), Չինաստան, Իրան (Գ. խմբակ), Քաթար եւ Ճափոն (Դ. խմբակ):

Նշենք, թէ մրցումները տեղի կ'ունենան Հարպինի մէջ (Չինաստան):

2003Ի ԱՂԶԿԱՆՑ ՄՈՆՏԻԱԼ

ՊՐԱԶԻԼ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ ԱՐԶԱՆԱԳՐԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Ֆրանսայի միակ կողմ Եշաճակած Փիշոն (աջից)

Քանի մը օրուան դադարէ ետք, երէկ, Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցան 2003ի աղջկանց Մոնտիալի չորս մրցումներ՝ Գ. եւ Դ. խմբակներէն ներս: Այսօրուան յայտագիրին վրայ ես կը գտնուին չորս մրցումներ՝ Ա. եւ Դ. խմբակներէն ներս:

Առաջին երկու մրցումներուն նման հետաքրքրական եղանակով երէկուան մրցումները, նկատի ունենալով, որ ցարդ տեղի ունեցած 12 անդրիվներէն որեւէ մէկը հաւասարութեամբ վերջ չէ գտած:

Պրագիլ եւ Գերմանիա հանդիսացան այն միակ կազմերը, որոնք իրենց երկրորդ յաղթանակը արձանագրեցին, բնականաբար գրաւելով իրենց խմբակին պարագլուխի դիրքը:

Պրագիլ կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 4-1 արդիւնքով պարտութեան մատնեց Ողիմպիականի ախոյեան՝ Նորվեգիան: Տանիլա (26րդ), Ռոզանա (37րդ), Մարթա (60րդ) եւ Քաթիա (68րդ) նշանակեցին յաղթական կազմին կողմը, իսկ Մարիան Փեթրուզը (45րդ)՝ Նորվեգիոյ կողմը:

Գերմանիա 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ճափոնը, չորսր՝ Սանտորա Մենէրթի (23րդ) եւ Պիր-ճիթ Փրինցի (36րդ եւ 67րդ) նշանակած կողմերուն:

Ֆրանսա արձանագրեց մրցաշարի իր առաջին յաղթանակը, 1-0 արդիւնքով պարտութեան մատնելով Հարուային Քորէան: Մարիէթ Փիշոն նշանակեց մրցումին «որը» կողմը (84րդ):

Դուրս խմբակի մը մաս կազմող Ֆրանսա յաջորդ հանգրուան հասնելու համար, պէտք է Ա. հանգրուանին իր կատարելիք վերջին մրցումին (Պրագիլի դէմ) անպայման լաւ արդիւնք արձանագրէ:

Վերջապէս, Քանադա արձանագրեց մրցաշարի իր առաջին յաղթանակը, 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով Արժանթինը: Շարմէն Հուսթը (19րդ) փենայիթիով եւ Քրիսթին Լէֆֆէ (79րդ եւ 82րդ) նշանակեցին Քանադայի կողմը:

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:

Ա. խմբակ

Շուէտ - Հիւսիսային Քորէա
Միացեալ Նահանգներ - Նիկերիա

Բ. խմբակ

Ղանա - Բուրիա
Չինաստան - Աւստրալիա

● Նշենք, թէ դասաւորումը այժմ կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

Ա. խմբակ

Մրց.	ԿէՏ
1. Հիւսիսային Քորէա	1 3 (3-0)
2. Մ. Նահանգներ	1 3 (3-1)
3. Շուէտ	1 0 (1-3)
4. Նիկերիա	1 0 (0-3)

Բ. խմբակ

1. Պրագիլ	2 6 (7-1)
2. Նորվեգիա	2 3 (3-4)
3. Ֆրանսա	2 3 (1-2)
4. Հար. Քորէա	2 0 (0-4)

Գ. խմբակ

1. Գերմանիա	2 6 (7-1)
2. Ճափոն	2 3 (6-3)
3. Քանադա	2 3 (4-4)
4. Արժանթին	2 0 (0-9)

Դ. խմբակ

1. Բուրիա	1 3 (2-1)
2. Չինաստան	1 3 (1-0)
3. Աւստրալիա	1 0 (1-2)
4. Ղանա	1 0 (0-1)

ՃԱՏՐԱԿ

ԳԱՐԻԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ՝ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ

Հայաստանի տղոց ճատրակի ախոյեանութեան վճռական հանգրուանը, որ տեղի ունեցաւ երէկ Գարիել Սարգսեանի եւ Արման Փաշիկեանի միջեւ, վերջ գտաւ ի նպաստ առաջինին, որ 1,5 - 0,5 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով, հանդիսացաւ Հայաստանի ախոյեան:

Սարգսեան, որ 1999ին եւս հանդիսացաւ Հայաստանի ախոյեան, առաջին մրցումին 42րդ շարժումին իր յաղթանակը արձանագրեց, մինչ երկրորդ եւ վճռական մրցումին 38րդ շարժումին հաւասարութիւն մը արձանագրեց Փաշիկեանի հետ:

Անոնք երկուքն ալ պիտի ստանան մէկուկէս միլիոն դրամ (իւրաքանչիւրը):

Նշենք, թէ Հայաստանի ճատրակի 63րդ ախոյեանութեան պաշտօնական փակումը տեղի պիտի ունենայ այսօր:

● ԿՐԵՏԵ կղզիին (Յունաստան) մէջ տեղի ունեցած ճատրակի ցուցադրական մրցումի մը ընթացքին, Կէրի Գասպարով 5,5 - 0,5 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, պարտութեան մատնելով իր մրցակիցը՝ վրացի Չուրաֆ Այվապարաշվիլիին:

ԵՈՒ. Ե. ԵՏ. Ա.

Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԳԻԻՆՔՆԵՐԸ

ԵՈՒ. Ե. ԵՏ. Ա. ի ֆուտբոլի մրցաշարին Ա. հանգրուանի երթի մրցումներուն, զօրաւոր նկատուող կարգ մը խումբեր ոչ համոզիչ արդիւնքներ արձանագրեցին համեմատաբար իրենցմէ աւելի տկար խումբերու դէմ, որոնք իրենց դաշտին վրայ տեղի ունեցած այդ առաւելութիւնէն որոշ չափով օգտուեցան:

Լիվըրփուլ, Օլիմպիկ Լիւպիանայի (Սլովենիա) դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, հաւասարութիւն մը խլեց դաշտին տէրերէն (1-1), չնորհիւ՝ Մայքլ Օուլըրի նշանակած կողմին (78րդ): Գուլիտով իր նշանակած այս կողմին չնորհիւ, Յուրն յաջողեցաւ եւրոպական մրցաշարերու ընթացքին իր 20րդ կողմը նշանակելով կոտրել Լիվըրփուլի նախկին մարզիկ Իան Ռաշի հաստատած մրցանիշը (անշուշտ՝ Լիվըրփուլի պատմութեան մէջ):

Լիվըրփուլի նման ոչ համոզիչ արդիւնք մը արձանագրեց Պարսելոնա, երբ 1-1 արդիւնքով հեռացաւ Մաթատոր Փուլսփի դաշտէն (Սլովակիա): Փաթիթի Քուլիվէթը նշանակեց Պարսայի կողմը (49րդ), մինչ դաշտին տէրերը իրենց հաւասարութեան կողմը նշանակեցին մրցումին կորսուած վայրկեաններու մարզիչ Պարսելոնայի մարզիչ Ֆրանց Թիքարտ, մրցումին ազդանշանէն շատ կարճատեւ մը առաջ, որոշեց դաշտը չնեղակայացնել:

Միջնապահ ժերար Լոփէսը, որովհետեւ ան բլիթային հեռաձայնով կը խօսէր: Անոր փոխարէն, Ռիքարտո դաշտ ներկայացուց Մարք Օվըրմարսը:

Պորուսիա Տորթմունտ, թէեւ 2-1 արդիւնքով յաղթական վերադարձաւ Աւստրիա Վիեննայի (Աւստրիա) դաշտէն, սակայն Տորթմունտի եւ մրցումին առաջին կողմը նշանակած (38րդ) դանացի յաւաքար Թիքարտի ղեկավարութեամբ: Այդ մէկը կրնայ պատճառ դառնալ, որ 28 տարեկան մարզիկին ֆուտբոլիստի ասպարէզը մեծ ապէս զիջեց:



Օուլըր

Ստորեւ՝ կարգ մը կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները:

Նիւրքերլ (Անգլիա) - Պրետա (Հոլանտա)	5-0
Ա. Էս. Ռոմա (Իտալիա) - Վարտար Սքոփիէ (Մակեդոնիա)	4-0
Մանչեսթըր Սիթի (Անգլիա) - Լոքերէն (Պելճիքա)	3-2
Օքսֆորդ (Ֆրանսա) - Նեօշաթի (Չուլիցերիա)	1-0
Սեմեմբարնիք (Մակեդոնիա) - Լանս (Ֆրանսա)	0-1
Սալվադոր (Աւստրիա) - Ուտիցեգէ (Իտալիա)	0-1
Քայլըրսլաուքըրն (Գերմանիա) - Թեփիլիս (Չեխիա)	1-2
Ափոնի Նիկոսիա (Կիպրոս) - Մայորքա (Սպանիա)	1-2
Աիֆ Սոլնա (Շուէտ) - Վալենսիա (Սպանիա)	0-1
Սաուրհեմքըրն (Անգլիա) - Շքուա Պուրթը (Ռումանիա)	1-1
Տանտի (Սլովակիա) - Փերուլիա (Իտալիա)	1-2

ԸՆԾԵՆՈՒՄ ԼՈՊԱԹՕ ՇԱՀԵՑԱԻ 18ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄԸ

Սպանիոյ հեծելաբշարի շրջափակին (Վուլթիթա) 18րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ, Լուս Ռուպաի մէջ (144 քմ.) վերջ գտաւ սպանացի Փետրո Տիաս Լոպաթոյի (Փաթերնիա) յաղթանակով, որ ժամանան գիծ հասաւ 44 երկվայրկեանի առաւելութեամբ, գերապանցելով երկրորդ դիրքը գրաւած իր ապագակիցը՝ Քոստա Ռոսի Գոնչալեսին: Լոպաթո արձանագրեց 3 ժամ 7 վայրկեանի եւ 47 երկվայրկեան արդիւնք: Ընդհանուր դասաւորման մէջ, սպանացի Իսիտրո Նոպալ (ՕՆՍԵ) կը շարունակէ մնալ պարագլուխի դիրքին վրայ (61 ժամ 20" 42") 3' 03"ի առաւելութեամբ գերապանցելով Իկոր Կոնչալեսին: Տր Կալտէանոն, իսկ 3' 09"ի առաւելութեամբ Ռուպաթո Վերսար (երկուքն ալ սպանացիներ):

Այսօր տեղի կ'ունենայ 19րդ հանգրուանի



Լոպաթո, որ կը հասնի ժամանակ գիծ

մրցումը՝ Ալբոկենտաւսէն Քոլաուո Վիլալպա (166 քմ.):

Կէտերու դասաւորման մէջ գերմանացի Էրիք Յապըլ (Թեյլքոն), որ ունի 151 կէտ, կը շարունակէ մնալ առաջին:

ԹԵՆԻՍ

ՍԱՐԳՍԵԱՆ ԵՒ ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ «ՔՐԵՍԼԻՆԻ ԲԱԺԱԿ»Ի ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

Յառաջիկայ Սեպտեմբեր 27էն Հոկտեմբեր 3, Մոսկուայի մէջ (Ռուսիա) տեղի պիտի ունենայ թենիսի միջազգային մրցաշարը մը՝ «Քրեմլինի բաժակ» անունով: Տիտղոսի տիրացողը պիտի ստանայ 142 հազար ամերիկեան տոլար, իսկ աւարտականին պարտուողը՝ շուրջ 84 հազար ամերիկեան տոլար:

Մրցաշարին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն նաեւ Հայրենի մարզիկ՝ Սարգիս Սարգսեան (դասուած՝ 22րդ) եւ արժանիքահարկ Դաւիթ Նալպանտեան (դասուած՝ 2րդ):

● ԱՅՓՅԻԿԻ մէջ տեղի ունեցող թենիսի աղջկանց միջազգային մրցաշարին, Ա. հանգրուանին իր կատարած մրցումին՝ զուգորդակապով, որ Սեպտեմբեր 10ին Հիւսիսային Իրլանտայի դէմ տեղի ունեցած մրցումին (Եւրո - 2004ի գտումի մրցաշար), ան գոլութիւն կատարած է Պելլիպասի մէջ գտնուող կարգ մը խանութներէն:

Օրին, Պելլիպասի ոստիկանութիւնը յայտնեց, որ այդ խանութներէն գողցուած է ընթացիկ երկու հեռաձայն եւ բաճկոն մը:

Հայաստանի պատուիրակութիւնը ստիպուած եղաւ վճարել 210 անգլիական փաունտ, որ սակայն պարտի վճարել՝ Սերգէյ Առաքելեան:

ՍԵՐԳԷՅ ԱՌԱՔԵԼԵԱՆ ԴՈՒՐՍ ԴՐՈՒԵՑԱԻ ԱՁԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԵՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբին եւ Բանանց Երեւանի մարզիկ՝ Սերգէյ Առաքելեան, դուրս դուրսեցաւ ազգային խումբէն, երբ Հայաստանի ֆուտբոլի ֆետերատիոնը փաստեց, որ Սեպտեմբեր 10ին Հիւսիսային Իրլանտայի դէմ տեղի ունեցած մրցումին (Եւրո - 2004ի գտումի մրցաշար), ան գոլութիւն կատարած է Պելլիպասի մէջ գտնուող կարգ մը խանութներէն:

Օրին, Պելլիպասի ոստիկանութիւնը յայտնեց, որ այդ խանութներէն գողցուած է ընթացիկ երկու հեռաձայն եւ բաճկոն մը:

Հայաստանի պատուիրակութիւնը ստիպուած եղաւ վճարել 210 անգլիական փաունտ, որ սակայն պարտի վճարել՝ Սերգէյ Առաքելեան:

ՍԱՄՓՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՒՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՑԱԻ ԵՐԵՔ ՈՍԿԻ ԵՒ ՄԷԿ ԱՐԾԱԹՄԵՏԱԼՆԵՐ

Ուրախքի (Ռուսիա) մէջ աւարտած սամփոյի աշխարհի երիտասարդներու եւ պատանիներու ախոյեանութեան մրցումներուն, Հայաստանի երեք սամփոսներ տիրացան ոսկի մետալներու, իսկ մէկ այլ սամփոստ՝ արծաթ մետալի:

Երիտասարդներու մրցումներուն, շախմատի ախոյեան հանդիսացան՝ Յովհաննէս Դաւթեան (57 քմ. դասակարգին մէջ) եւ Լայլերտ Աւագեան (74 քմ.), իսկ պատանիներու ախոյեան՝ Վահան Վարդանեան (62 քմ.): Երիտասարդներու մրցումներու փոխ ախոյեան հանդիսացաւ՝ Յովհաննէս Մալխասեան (62 քմ.):

Խմբային դասաւորման մէջ Հայաստան գրաւեց երրորդ (երիտասարդներ) եւ եօթներորդ (պատանիներ) դիրքերը: Երկուքին պարագային ալ Ռուսիա գրաւեց առաջին դիրքը:

Մրցաշարին լաւագոյն իրաւարար ընտրուեցաւ Հայաստանի պատուիրակութիւնը զիւրաւորող՝ Էդուարդ Աւրանեան:

ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ ԸԱՀԵՑԱԻ «ՍԱՆԹԻԱԿՕ ՊԷՌՆԱՊԷՕ»Ի ԲԱԺԱԿԸ

Պատուելու համար իր նախկին մարզիկը՝ Ալֆրէտո Տի Սթեֆանոն, Ռէալ Մատրիտ իր դաշտին՝ «Սանթիակո Պէրնապէօ»ի մէջ հիւրընկալեց արժանաւորներու Ռիվըր Փլէյթը սկիւմբը՝ «Սանթիակո Պէրնապէօ Բաժակ» անունով մրցաշարը մը կատարելով անոր դէմ: Մրցումը վերջ գտաւ սպանական կապիտան յաղթանակով՝ 3-1: Սանթիակո Սոլարի (55րդ) եւ Խաիէ Կարսիա Փորթիլո (58րդ եւ 70րդ) նշանակեցին սպանական կապիտանի կողմը, իսկ Լուչո Կոնչալեսի՝ հիւր կապիտանի կողմը (79րդ):

Այժմ 77 տարեկան Տի Սթեֆանոն, ճիշդ յիսուն տարի առաջ առաջին անգամ ըլլալով կրեց Ռէալ Մատրիտի շապիկը: Ռէալի հետ ան ուր անգամ չափեցաւ Սպանիոյ ախոյեանութիւնը, իսկ յաջորդաբար հինգ անգամ՝ Եւրոպայի բաժակը (1956էն սկսեալ):

ԼԻԲԱՆԱՆԻ Հ. Մ. Ը. Մ. Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

ԳԻՒՂԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Շրջանաւորութեամբ՝ ԼԻԲԱՆԱՆԻ Հ. Մ. Ը. Մ. Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կիրակի, 28 Սեպտեմբեր 2003, կեսօրուան ժամը 12:00էն սկսեալ «Ալ-Մասարա» ձաշարահին մէջ, Զըլէյաթէն Պիքֆայա երկրորդ մայրուղիին վրայ:

